208(09)
N-17

1043

2010

208(09)
Հ-16
2412

Դր. ԽԱԼԱԹԵԱՆՑ.

Ա. ԵՒ Բ.

ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳՐՔԵՐԻ ՆՈՐԱԳԻՒՏ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.

ԱՐՏԱՏՊԱՍ
«Արարատ» ամսագրի 1896 թ. յուլիս համարից։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
1896

Մայր Աթոռի Տպարանում վաճառում են հետեւեալ գրքերը.

	Ռ.	Կ.
1. Բագրեւանդ և Զրաբաշխ գաւառ, աշխ. Ս. Հայկունի	1	40
2. Դեօլլինգերի Նամակները, թարգ. Խաչվանքեան . . .	—	50
3. Էլիզէ Ռէկլի, Ռուսական Հայաստան, թարգ. Միաբան	—	30
4. Նոյնը, Լազիստան—Հայաստան և Քիւրդիստան, թարգ. Միաբան	—	50
5. Խանգարմունք Հայկաբանութեան, աշխ. Գ. Եպիս. Ալյվազեան	—	20
6. Կիրակուայ Հանգստութիւնը և նորա նշանակութիւնը առողջութեան համար, Դոկ. Նէէարի թարգ. բժ. Մ. Զարգարեան . . .	—	20
7. Մարգարիտ Արքայութեան երկնից, գրեց Խրիմեան Հայրիկ . .	—	30
8. Խաչի ճառ, գրեց Խրիմեան Հայրիկ	—	30
9. Դատաստանագիրք Հայոց, Մխիթար Գօշի . .	3	—
10. Մանկական Պարտէզ, թարգ. բժ. Լ. Տիգրանեան . . .	—	20
11. Պապիկ և Թոռնիկ, գրեց Խրիմեան Հայրիկ. . . .	—	60

ԴՐ. ԽՈԼԸԹԵՈՆՑ.

208(09)
Ֆ-17

Ա. ԵՒ Բ.

ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳՐՔԵՐԻ ՆՈՐԱԳԻՒՏ

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐՏԱՏՊԱՏ
«Արարատ» ամսագրի 1896 թ. յուլիս տարուոյ.

107799-42

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
1896

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՒՏ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ.

Ա. ԵՒ Բ. ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳՐՔԵՐԻ

ԱՍՈՐԵՐԷՆԻՑ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.

Յայտնի է, որ Աստուածաշունչ մատեանը թարգմանուել է մեր նախնիքներից երկու անգամ՝ նախ Ասորերէնից և ապա Յունարէնից: Սակայն մինչև այսօր մեզ հասած Ս. Գրքի ձեռագիրները, որպէս և հետևաբար բոլոր տպագիրները, Յունականից թարգմանութիւնն են ներկայացնում: Արդարև, քննական գրականութեան մէջ այլ և այլ ժամանակ նըկատուած են եղել ենթադրութեամբ Ասորերէնի թարգմանութեան հետքեր Հայ Աստուածաշնչի առանձին բառերի ու նախադասու-

թիւնների մէջ, բայց ամբողջ հատուածներ, գլուխներ կամ գրքեր մինչև այժմ դեռ չէ յաջողուել գտնել։ Զբաղուելով երեք շաբաթի չափ Ս. Էջմիածնի մատենադարանում և նիւթեր ժողովելով Մ. Խորենացու պատմութեան վերաբերեալ երկրորդ հետազօտութեանս համար, նիւթեր, որոց մէջ Ս. Գիրքը, ինչպէս ես կարծիք եմ յայտնել, նոյն պատմագրի կարևորագոյն աղբիւրներից մէկն է,—ես գտայ բախտաւոր դիպուածով մի գրչագիր Աստուածաշնչի մէջ՝ №176 ըստ Կարինեանցի ցուցակի, մինչև այսօր բնաւ անծանօթ և սովորական հայ թարգմանութիւնից ըոլորովին տարբեր մի այլ թարգմանութիւն, և այն՝ միայն Ա. և Բ. Մնացորդաց գրքերի մէջ պահուած։ Աստուածաշնչի այդ հազուագիւտ գրչագիրը այլ գրչագիրների հետ միասին գտնվում է Մայր Աթոռի մատենադարանի առաջին դահլիճում, ուր պարապում է երկար ժամանակ Ս. Գրքի գրչագիրների բաղդատութեամբ տպագրելու համար Հ. Եղիա Հասան-Ջալալեանցը։ Արժանապատիւ Հ. Եղիան նկատած լինելով հանդերձ № 176 գրչագրի և յատկապէս Ա. և Բ. Մնացորդաց գրքերի տարբեր ընթերցմունքները, բայց դիտաւորութիւն ունենալով միայն Ցունականից արած սովորական հայ թարգմանութեան գրչագիրների համեմատութիւնը, կարևորութիւն չէր տուել այդ եզական օրինակի խոշոր տարբերութիւններին։ Ասում եմ եզական, որովհետև աչքից եմ անցրել ես այնուհետև Մայր Աթոռում գտնուած Աստուածաշնչի երեսնից աւելի գրչագիր օրինակները, բայց և ոչ մէկի մէջ չեմ նկատել այս նորագիւտ թարգմանութեան հետքերը։ Վերջինիս լեզուից երևում է, որ թարգմանութիւնը հին է և ընտիր և կատարուած է ամենայն հաւանականութեամբ Ասորերէնից. թէպէտև Ասորական Աստուածաշնչի բնագիրը և այլ անհրաժեշտ գրուածքներ ձեռքիս տակ չունենալուս պատճառով անկարող եմ առ այժմ վերջնականապէս վճռել այս թէ՛ Հայ և թէ՛ Ասորի գրականութեան համար վերին աստիճանի հետաքրքրական խնդիրը, թողնելով դորա մասին, որպէս և դորա հետ կապ ունե-

ցող այլ կարևոր հարցերի վերաբերմամբ, բուն յիշատակարանի՝ այն է Ա. և Բ. Մնացորդաց գրքերի լիակատար հրատարակութեան միջոցին խօսելու հանգամանօրէն։ Հրատարակութիւնը յոյս ունիմ աւարտել մինչև ներկայ տարոյս վերջը։ Իսկ մինչ այն՝ իբրև նմուշ առաջ եմ բերում բանասէրների համար մի քանի հատուած նորագիւտ թարգմանութիւնից գրչագրի ճշտիւ պահպանուած ուղղագրութեամբ՝ դիմացը նշանակելով սովորական տպագիր թարգմանութիւնը ըստ հրատարակութեան Ջոհրաբի, Վենետիկ. 1805։

Այս նշանաւոր գիւտի մասին ես պատիւ ունեցայ յուլիսի 6-ին առանձին զեկուցումն ներկայացնել Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց Կաթուղիկոսին, որ փիւր գոհունակութիւնը յայտնելով այս առթիւ, բարեհաճեց թոյլատրութեան իրաւունք շնորհել ինձ տպագրելու Ա. և Բ. Մնացորդաց գրքերը ըստ նորագիւտ թարգմանութեան՝ հանդերձ կարևոր գիտական լուսաբանութիւններով։ Այս մասին, որպէս և մինչև այսօր Ս. Էջ-

միածնում իմ գտած համակրալիր ընդունելութեան համար, յայտնում եմ այսու Նորին Վեհափառութեան իմ որդիական ամենախորին երախտագիտութիւնս։

ԳՐԱԳԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ № 176

(Նորագիւտ թարգմանութիւն)

Գիրք Առաջին Մնացորդաց, էջ. զոչ. 196ա.

Գլուխ Ծ.

Եւ այլազգիքն հասեալ պատերազմ տային ընդ Իսրայէլ և ի փախուստ դառնայր գունդն Իսրայէղեան յերեսաց այլազգեացն։ և զհետ մտեալ էին այլազգիքն շաւուղի և որդւոց Նորա. և հարին այլազգիքն զյովնաթան, և զամինադաբն, և զմիսուէն զորդիսն շաւուղի։ և ծանրացաւ պատերազմն ի վերայ շաւուղի։ և եկին հասին նմա աղեղնաւորք և արգելին զնա։ Խօսել սկսաւ շաւուղ ընդ զինակրին իւրում և ասէ. առ ի վեր զսուսեր քո և սպան զիս։ զի մի՛ եկեսցեն հասցեն անթլփատքն և խաղ առնիցեն զիս. և ոչ կամէր առնել նա զհրամանս շաւուղի։ զի երկնչէր յոյժ. ապա եհան շաւուղ զսուսերն իւր և զիւրովի չոգաւ։ Իբրև ետես զինապետն թէ մեռաւ շաւուղ։ ել և ինքն ի սուր իւր և անդէն մեռաւ։ Մեռաւ շաւուղ և երեքին որդիք իւր յաւուր յայնմիկ. և ամենայն տուն Նորա միանգամայն սատակեցան։ Իբրև տեսին ամենայն այր Իսրայէղեան որ ի Հովիտս անդ էին։ եթէ փախեաւ ամենայն գունդն Իսրայէղացոց և մեռաւ շաւուղ և

ՏՊԱԳԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

(Հրատարակութիւն Զոհրաբ)

Գիրք Առաջին Մնացորդաց, էջ 274—275.

Գլուխ Ծ.

Եւ այլազգիք պատերազմեցան ընդ Իսրայէլի և փախեան յերեսաց այլազգեացն. և անկան վիրաւորք ի լերինս գեղբուայ։ Եւ պնդեցան այլազգիքն զհետ սաւուղայ և զհետ որդւոցն Նորա։ և հարին այլազգիքն զյովնաթան։ և զամինադաբ։ և զմեղքիսաւէ զորդիսն սաւուղայ։ Եւ ծանրացաւ պատերազմն ի վերայ սաւուղայ։ և գտին զնա աղեղնաւորք աղեղամբք և ցաւովք։ և վտանգեցաւ յաղեղանցն։ Եւ ասէ սաւուղ ցկապարճակիրն իւր. ձգեա՛ զսուր քո և խոցեա՛ զիս դովա։ մի՛ գուցէ եկեսցեն անթլփատքն այնոքիկ։ և խաղասցեն ինև։ Եւ ոչ կամեցաւ կապարճակիրն Նորա՝ վասնզի երկեաւ յոյժ. և առ սաւուղ զսուրն։ և անկաւ ի վերայ Նորա։ և ետես կապարճակիրն Նորա թէ մեռաւ սաւուղ։ անկաւ և նա ի վերայ սրոյն իւրոյ և մեռաւ։ Եւ մեռան սաւուղ և երկոքին որդիքն իւր յաւուր յայնմիկ. և ամենայն տուն Նորա միանգամայն մեռան։ Եւ ետես ամենայն այր Իսրայէլի որք ի հանգրուանսն էին։ եթէ փախեաւ Իսրայէլ։ և եթէ մեռան

որդիք իւր՝ թողին զիւրաքանչիւր քաղաքս և փախեան. և եկին այլազգիքն և մտին բնակեցան անտէն ի նոսա։ Եւ եղև ի վաղիւ անտր եկին իջին ի տեղի պատերազմին դիակապուտ լինել այլազգիքն. և եկին գտին զշաւուղ և զորդիսն անկեալ ի մէջ դիակացն ի լերինն գեղբուէ. մերկացին զնոսա և առին զզէնս նոցա յիւրեանս և հատին զգլուխս նոցա՝ և առաքեցին ընդ ամենայն կողմանս այլազգեաց՝ և յղեցին աւետաւորս ընդ ամենայն կուռս պաշտամանց նոցա՝ և տարան եդին զզէնն և զգլուխն ի մեհեանս իւրեանց ի տանն դագոնայ։ Եւ լուան շուրջ բնակիչքն յարիս գաղաադայ զամենայն գործս զոր գործեցին այլազգիքն ընդ շաւուղ և ընդ որդիսն և ընդ իսրայէղ։ Յարեան [էջ 196 բ] վաղվաղակի՝ իջին ի գաղգաղա՝ և առին զդիակունս շաւուղի և զորդոցն՝ և բերին թաղեցին զոսկերս նոցա ընդ կաղնեաւն յաղիսն. և անդ նստան լացին զնոսա աւուրս է։ Անդ մեռաւ շաւուղ յանօրէնութեան իւրում զոր արար առաջի տեառն. և երթեալ հարցանէր նա զվոհուկսըն և խնդրէր ի նմանէ. և սամուէլ մարգարէ խօսէր ընդ նմա և նայ ոչ խնդրէր ի տեառնէ։ Արդ սպան զնա տէր և դարձոյց զարքաութիւնն ի դաւիթ յորդի յեսսեայ։

սաւուղ և որդիք նորա՝ թողին զքաղաքս իւրեանց և փախեան. և եկին այլազգիքն և բանակեցան ի նոսա։ Եւ եղև ի վաղիւն՝ եկին այլազգիքն կողոպտել զվիրաւորսն՝ և գտին զսաւուղ և զորդիս նորա անկեալս ի լերինն գեղբուայ՝ մերկացուցին զնա. և առին զգլուխս նորա՝ և զզէն նորա՝ և առաքեցին յերկիր այլազգեաց՝ շուրջանակի աւետարանել կռոցն իւրեանց՝ և ժողովրդեանն. և եդին զզէն նորա ի տան աստուծոյն իւրեանց. և զգլուխ նորա եդին ի տան դագոնայ։ Եւ լուան ամենեքեան որ բնակեալ էին ի գաղաադ՝ զոր ինչ արարին այլազգիքն ընդ սաւուղ և ընդ իսրայէլ. և յարեան ի գաղաադէ ամենայն արք զօրաւորք՝ և առին զմարմինն սաւուղայ և զմարմինս որդւոց նորա՝ և բերին յաբիս՝ և թաղեցին զոսկերս նոցա ընդ կաղնեաւն յաբիս. և պահեցին աւուրս եւթն։ Եւ մեռաւ սաւուղ յանօրէնութիւնսն իւր՝ զորս անօրինեցաւ ի տէր. ըստ բանին տեառն զի ոչ պահեաց. վասն զի եհարց սաւուղ վհկաւն խնդրել. և պատասխանի արար նմա սամուէլ մարգարէ. և ոչ խնդրեաց զտէր. և սպան զնա. և դարձոյց զթագաւորութիւնն դաւթի որդւոյ յեսսեայ։

Ա. Մնացորդաց, գլ. ԺԸ (էջ գրչ. 200ա)

Եւ եղև յետ այսորիկ հարկանէր վանէր դաւիթ զայլազգիսն և հանէր ի ձեռաց նոցա զգէթն և զդստերս նորա ի ձեռաց այլազգեաց. և հարկանէր վանէր զմովաբն, և լինէր մովաբ ծառա դաւթի պաշտել պատարագաւք։ Ապա հարկանէր վանէր դաւիթ զադրիազար արքայ սուբայեմաթ, ի ժամանակի իբրև յարուցեալ գայր դնել զձեռն իւր ի վերայ գետոյն Եփրատու. և առնոյր դաւիթ զնորա Ռ. կառս ոսկիապատս և ԷՌ. հեծեալ, և քսան հազար հետևակ. և քակէր, քանդէր զայն, և թողուցեալ իւր անտի Ճ. կառս ի սպաս։ Ապա դարձեալ գայր հասանէր արքայ ասորեստանի ի կողմանց դամասկոսի ի թիկունս ադրիազարու արքայի սուբա։ դարձեալ հարկանէր վանէր դաւիթ զասորիսն ի քսան և յերկու հազար այր պատերազմող և զաշխարհն ի հարկի կացուցանէր. և շինէր պարհակ ի դամասկոս ասորեստանեաց և կային նմա ի ծառաութիւն բերել նմա պատարագս հանապազորդս. և առնոյր դաւիթ զմանեակն ոսկիս ի ծառայիցն ադրիազարու և բերէր զնոսա յերուսաղէմ։ և ի դաբաթայ և յայլոց ընտիր ընտիր քաղաքացն ադրիազարու առնոյր դաւիթ արծաթ և արոյր և պղինձ բազում յոյժ. ուստի և առնէր իսկ սողոմոն զծովն պղնձի և զսիւնս պղնձիս և զայլ

Ա. Մնացորդաց, գլ. ԺԸ (էջ. տպ. 287—288).

Եւ եղև յետ այսորիկ՝ եհար դաւիթ զայլազգիսն, և վանեաց զնոսա. և առ զգէթ և զգեօղս նորա ի ձեռաց այլազգեացն։ Եւ եհար զմովաբ. և էին մովաբացիքն ծառայք դաւթի բերել ընծայս։ Եւ եհար դաւիթ զադրաազար արքայ սուբայ ի յեմաթ, յերթալ նորա հաստատել զձեռն իւր ի վերայ գետոյն եփրատայ. և առ դաւիթ զնորա հազար կառս՝ և եւթն հազար ձիոց՝ և քսան հազար արանց հետևակաց. և քակեաց դաւիթ զամենայն կառսն, և եթող ի նոցանէ հարիւր կառս։ Եւ եկն ասորին ի դամասկոսէ օգնել ադրաազարայ արքայի սուբայ. և եհար դաւիթ յասորեացն քսան և երկու հազարս արանց։ և եդ դաւիթ ամրոց յասորիս ի դամասկոսի, և էին դաւթի ծառայք՝ բերել նըմա ընծայս։ և ապրեցոյց տէր զդաւիթ յամենայն տեղիս ուր և երթայր։ Եւ առ դաւիթ զմանեակսն ոսկեղէնս, որ էին ի ծառայսն ադրաազարայ, և եբեր զայն յերուսաղէմ։ Եւ ի մատեբեթայ, և յընտիր ընտիր քաղաքացն ադրաազարու առ դաւիթ պղինձ բազում յոյժ. և ի նոցանէ արար սողոմոն զծովն պղնձի, և զսիւնսն, և զկահսն պղնձիս։ Եւ լուաւ թովու արքայ եմաթայ եթէ եհար դաւիթ զամենայն զօրութիւնսն ադրաազարայ արքայի սուբայ. և առաքեաց զդուրամ զորդի իւր առ արքայ դա-

ամենայն սգասս պղնձիս։ Ապա իբրև լուաւ Թովա
արքա՝ արքա եմաթա, եթէ վանեաց սատակեաց
դաւիթ զամենայն զօրութիւնն ադրիազարու ար-
քայի սուբայ և առաքեաց նայ զադորամ զորդի
իւր առ դաւիթ, աղաչէր զնայ ի խաղաղութիւն և
օրհնել զնայ, զի հարկանէր վանէր զադրիազար, զի
այր էր նա խռովիչ մարտիկ պատերազմող և վանէր
զադրիազար դաւիթ և առնոյր զամենայն սպասս զոսկո
և զարծաթո և պղնձոյ, և բերէր դաւիթ զամենայն
սպասք զոսկո և զարծաթո յամենայն ազգաց հեթանո-
սաց. յեդոմայեցւոցն և ի մովաբացոցն, և յորդւոցն
ամոնա և այլւոց ազգաց ամաղեկացւոցն։ Եւ ա-
բեսսեա որդի շարուհեայ հարկանէր վանէր զկող-
մանս եդոմացոցն ի հովիտս աղտիցն յուլթ և ի
տասն հազար. և անդ շինէր պարհակ. և պարհա-
կապանս կարգէր. և կային եդոմայեցիք ի ծառայու-
թիւն դաւթի յամենայնի յոր և հրամայէր նոցայ։
Եւ թագաւորեաց դաւիթ ամենայնիւ ի վերայ իս-
րայէլի. և առնէր զիրաւունս և զարդարութիւն
յամենայն ժողովրդեանն։ Եւ յովաբ որդի շարու-
հեա սպարապետ նորա, և յովսափաթ որդի աքե-
լովթ յիշատակաց դպիր, և աբիդովբ, և աբիմե-
լեք, որդիք սադովկա քահանայք նորա, և շուշա
դպրապետ նորայ, և բանէ որդի յովիդաէ ի վերայ
ելիմոի. և որդիքն դաւթի առաջինքն ի ձեռն
թագաւորի։

ւիթ հարցանել զնմանէ ի խաղաղութիւն, և օրհնել
զնա. վասն զի պատերազմ տայր ընդ նմա ադրա-
զար, և եհար զնա. քանզի այր թշնամի էր թովու՝
ադրաազարայ։ և ամենայն անօթք ոսկեղէնք և ար-
ծաթեղէնք ի ձեռս նորա։ և զայնոսիկ սրբեաց դա-
ւիթ տեառն ընդ արծաթոյն և ոսկւոյն զոր առ յա-
ժենայն ազգացն. եդոմայ, և ի մովաբայ, և յորդ-
ւոցն ամոնայ, և յայլազգեացն, և յամաղեկայ։ Եւ
աբեսսա որդի սարուհեայ եհատ զեդոմ ի հովտին
ելովնայ՝ ութուտասն հազար. և եդ ի հովտին ամ-
րոց. և էին եդոմայեցիք ծառայք դաւթի։ և փրր-
կեաց տէր զդաւիթ յամենայն տեղիս ուր և երթայր։
Եւ թագաւորեաց դաւիթ ի վերայ ամենայն իսրա-
յէլի. և էր՝ առնել իրաւունս և արդարութիւն ամե-
նայն ժողովրդեան իւրում։ Եւ յովաբ որդի սարու-
հեայ ի վերայ զօրացն. և յոսափատ որդի աքիղու-
դայ յիշատակաց դպիր։ Եւ սադովկ որդի աքիտով-
բայ, և աբիմելէք որդի աբիաթարայ՝ քահանայք։
և սուսա դպրապետ։ Եւ բանեաս որդի յովիդայայ
ի վերայ քերեթեայն և ոփելեթեայն։ և որդիք
դաւթի առաջինք փոխանորդք արքայի։

Ա. Մնացորդաց, զլ. Ի. (էջ գրչ. 200 բ- 201 ա),

Եւ եղև յամի միւսում ի ժամանակս չուոց թագաւորացն, առ յովաբ սպարապետն զօրացն դաւթի զամենայն զօրս իսրայէղացոց, և անգանէր տարածէր ընդ երկիրն ամոնացոց, հարկանէր և յապականութիւն դարձուցանէր։ Ապա եկն յովաբ և նստաւ զհռաբաւ պաշարել զնայ. և դաւիթ նստէր ի ներքս յերուսաղէմ, և հարկանէր վանէր յովաբ սպարապետն դաւթի զհռաբայն և առնոյր զնայ. և առեալ դաւիթ զպսակ թագաւորին նոցա ի գլխոն նորա ի գլուխ իւր դնէր ինքն. և կշիռ պսակին քանքար մի ոսկի, և ի նմա ակունք պատուականք. և էր այն պսակ ի գլուխ դաւթի զամենայն աւուրքս կենաց իւրոց և զառ զապուր զաւար քաղաքին բերէին կուտէին յոյժ. և զօրսն հանեալ կոտորէին սուսերօք և սակրօք, և ի տատասկ երկաթիս. և այսպէս առնէր դաւիթ ընդ ամենայն որդիսն ամոնայ. և ապա դառնայր դաւիթ և ամենայն զօրքն յերուսաղէմ։ Եւ եղև յետ այսորիկ լինէր գործ պատերազմի ընդ այլազգիսն գազեր. յայնմ ժամանակի հարկանէր վանէր սուրբաբի եսթեանց զսափի որ յորդոց սկայիցն էր, և անդէն նկուն յերկիր կործանէր, և նոքա ի պարտութիւն մատնէին։ Եւ եղև դարձեալ պատերազմ ընդ այլազգիսն, և հարկանէր վանէր եղիանան որդի յայիր զաթոմի զեղ-

Ա. Մնացորդաց, զլ. Ի. (էջ տպ. 290)

Եւ եղև ի միւսում տարւոջն յելանել թագաւորացն, ած յովաբ զամենայն գունդս զօրացն, և ապականեաց զամենայն երկիր որդւոցն ամոնայ, եկին և նստան շուրջ զհռաբաթաւ. և դաւիթ նստէր յերուսաղէմ. և առ յովաբ զհռաբաթ, և կործանեաց զնա։ Եւ առ դաւիթ զպսակն մեղքոմայ թագաւորին նոցա ի գլխոյ նորա. և գտաւ կշիռ նորա տաղանտ ոսկւոյ, և ի նմա ակն պատուական. և էր ի գլուխն դաւթայ. և աւար բազում յոյժ եբեր։ և զժողովուրդն որ էր ի նմա եհան. և սղոցեաց սղոցօք և ուրագօք երկաթեօք. և այնպէս արար դաւիթ ամենայն քաղաքաց որդւոցն ամոնայ։ և դարձաւ դաւիթ և ամենայն զօրն իւր յերուսաղէմ։ Եւ եղև յետ այնորիկ եղև միւսանգամ պատերազմ ի գազեր ընդ այլազգիսն. յայնժամ եհար սուբաքէ ուսթացի զսեպփիաս յորդւոց սկայիցն և վանեաց զնա։ Եւ եղև դարձեալ պատերազմ ընդ այլազգիսըն, և եհար եղէանան որդի յայիրայ զղէեմի զեղբայրն գողիադու գեթացւոյ. և փայտ նիզակի նորա իբրև զստորի ոստայնակաց։ Եւ եղև դարձեալ պատերազմ ի գեթ. և էր այր ոմն մեծ յոյժ, և մատունք նորա վեց վեց, քսան և չորք. և նա էր յորդւոց սկայիցն. և թշնամանէր զիսրայէլ. և եհար զնա յովնադաբ որդի սամայայ, որդի եղբօր դաւթայ։

բայր գողիադու, և բուն նիզակի նորա իբրև զվերուտորի ոստայնանկաց։ Եւ եղև դարձեալ գործ պատերազմի ի գէթ. և անդ էր այր մի յաղթանդամ և մատունք ոտից և ձեռաց նորա վեց վեց. և էր այրն ի սկայից տոհմէ անտի։ և ըստ գունդն արտաքս ելեալ գնէր նախատինս զօրացն իսրայէղացոց. ապա անդրէն հարկանէր վանէր զնա յովնաթան որդի սամայ եղբօր դաւթի. այս այն սկայք չորք էին։ որք մնացեալ էին յռափային ի գէթ։ և անգան սատակեցան ի ձեռն դաւթի և ի ձեռն ծառայից նորա։

Բ. Մնացորդաց։ զլ. Թ. (էջ գրչ. 209բ).

Եւ տիկին հարաւոյ լուաւ զիմաստութիւնն սողոմոնի և եկն փորձել զնա յառակն օրինակաց յերուսաղէմ. և եկն առ սողոմոն և խօսեցաւ զամենայն որ ինչ կայր ի սրտի նորա։ Եւ պատմեաց սողոմոն զամենայն բանս նորա անտրէն։ և ոչ վրիպեցաւ բան զոր ոչ մեկնեաց սողոմոն անտրէն։ Եւ ետես կինն հարաւոյ զամենայն իմաստութիւն սողոմոնի և զտունն զոր շինեաց։ և զծախս սեղանոյն։ և զաթոռս մանկանցն իւրոց։ և զկարգս պաշտաման նորա։ և զհանդերձս պատմուճանի նորա։ և զբերանապարիշտս և զհանդերձս իւրեանց։ և զողջակէզսն զոր մատուցանէր. զարմացեալ էր և ոչ կային ոգիքն առ իւր։ Ապա խօսել կալաւ ընդ

նոքա եղեն հռափայ ի գէթ. ամենեքեան էին արք հսկայք. և անկան ի ձեռս դաւթայ։ և ի ձեռս ծառայից նորա։

Բ. Մնացորդաց։ զլ. Թ. (էջ տպ. 324).

Եւ թագուհին սաբայ լուաւ զանուն սողոմոնի։ և եկն փորձել զսողոմոն առակաք յերուսաղէմ։ յոյժ ծանր զօրութեամբ։ և ուղտուք՝ որ բարձեալ բերէին խունկս և ոսկի բազում։ և ականս պատուականս. և եկն առ սողոմոն։ և խօսեցաւ ընդ նմա զամենայն որ ինչ էր ի միտս իւր։ Եւ պատմեաց նըմա սողոմոն զամենայն բանս նորա. և ոչ վրիպեաց բան մի ի սողոմոնէ զոր ոչ պատմեաց նմա։ Եւ ետես թագուհին սաբայ զիմաստութիւն սողոմոնի. և զտունն զոր շինեաց. և զկերակուրս սեղանոյն. և զաթոռս ծառայից նորա։ և զկարգս պաշտօնէից նորա։ և զպատմուճանս նոցա. և զմատռուակս նորա։ և զզգեստն նոցա։ և զողջակէզսն զոր մատուցանէր ի

թագաւորին և ասէ. ճշմարիտ էր բանն՝ զոր լսէի ես յերկրի իմում վասն քո և բանից քոց՝ մինչև եկի և տեսի աչօք իմովք. և ահաւասիկ տեսա-նեմ զի կիսոյ կէս ոչ էր զոր պատմէին վասն ի-մաստութեան քո. զի աւելի է զոր տեսանեմքս՝ քան զայն զոր լուայն ...

Բ. Մնացորդաց՝ գլ. ԺԸ (էջ գրչ. 213բ).

... Եւ ելին գնացին ախասբ արքայ իսրա-յէղացոց և յովսափատ արքա յուդայ ի հռա-մովթ գաղաադ. սկսաւ խօսել արքայն իսրայէղացոց առ յովսափատ և ասէ. վառեցայց՝ կռվեցայց պատրաստեցայց և մըտից ի պատերազմ։ և դու զգեցիր զհանդերձ թագաւորութեան իմոյ և կաց ի պատուի՝ Եւ յայլակերպ եղև արքայն իսրայէլա-ցոց և եմուտ ի պատերազմ։ և արքայն ասորոց պատուէր ետ զօրացն զօրագլխաց և ասէ. ամենևին ձեռն մի՛ ձգիցէք մի՛ ի մեծ և մի՛ ի փոքր. բայց մի-այն յարքայն իսրայէլի՝ և եղև իբրև տեսին նա-հատակքն որ գնային առաջի գնդին կառաւք և երի-վարօք զյովսափատ՝ այր առն ձայն առնել սկսան և ասեն. ահա՛ արքա իսրայէղի և պատեցին զնա. ապա ձայն եբարձ աղաղակեաց և ասէ. չեմ ես արքայն իսրայէղի. և տէր ապրեցոյց զնա ի նոցանէ։ և եղև

տանն տեառն՝ ի զարմացման եղև. և ասէ ցարքայ. ճշմարիտ էր բանն զոր լուայ յերկրին իմում յա-ղագս բանից քոց՝ և վասն իմաստութեան քոյ՝ և ոչ հաւատացի բանիցն մինչև եկի՝ և տեսին աչք իմ. և ահա ոչ է ի կէս զոր պատմեցինն՝ ի բազ-մութենէ իմաստութեանս քոյ զորս յաւելեր ի համ-բաւն զոր լուայ. . . .

Բ. Մնացորդաց՝ գլ. ԺԸ. (էջ տպ. 338 339).

. . . Եւ ել արքայն իսրայէլի՝ և յովսափատ արքայ յուդայ յռամովթ գաղաադ։ Եւ ասէ արքայն իսրայէլի ցյովսափատ՝ ծածկեա զիս և մտից ի պա-տերազմն՝ և դու զգեցիր զպատմուճանն իմ։ և ծածկեցաւ արքայն իսրայէլի՝ և եմուտ ի պատե-րազմ։ Եւ արքայն ասորւոց պատուիրեաց իշխանաց կառացն որք էին ընդ նմա և ասէ՝ մի՛ պատերազմիցիք ընդ փոքրու և մի՛ ընդ մեծի՝ բայց ընդ արքային իսրա-յէլի միայն։ Եւ եղև իբրև տեսին իշխանք կառացն զյովսափատ՝ և ասեն նոքա՝ սա է արքայն իսրայէ-լի. և շուրջ եղեն զնովաւ պատերազմել։ և գոչեաց յովսափատ՝ և տէր ապրեցոյց զնա. և դարձոյց զնո-սա աստուած ի նմանէ։ և եղև իբրև տեսին իշխանք կառացն՝ թէ ոչ է նա արքայն իսրայէլի՝ դարձան ի նմանէ։ Եւ այր ոմն ելից զաղեղն կորովութեամբ՝ և եհար զարքայն իսրայէլի ընդ մէջ թոքոցն և լան-

իբրև տեսին զնայ նահատակքն թէ չէ նա արքայն իսրայէղի, թողին զնա և դարձան ի նմանէ։ և ընդ դառնալն իւրեանց նէէման այր հաստաբազուկ կորովի ձեռօք իբրև զփորձ կամեցաւ առնուլ զանձին. նետ մի ձգեաց ի խուռն գնդին և եհար զարքա իսրայէլացոցն ընդ մէջ սրտառաջացն և ողնափողին և թափ եհան։ Խօսել սկսաւ թագաւորն ընդ կառավարին և ասէ. դարձո զձեռն քո և հան ըզկառըս ի պատերազմէ աստի զի վիրաւորեալ եմ։ և անդէն մրրկեցաւ գունդն և ճակատն խանգարեցաւ։ Եւ թագաւորն իսրայէլացոց կայր ընդդէմ ասորոց մինչև յերեկս աւուր և ընդ արևուն մտանել թափէր զոգիսն։

Բ. Մնացորդաց, զլ. ԻԶ (զրչ. էջ 217 ա).

... Եւ շինեաց ոզիա զաշտարակն յերուսաղէմ, և զդուռնն անկեանն, և ի վերայ դրան անկեանն, և ի վերայ անկեանցն ձորոյն, և զօրացոյց նա գուբս գուբս բազումս, զի գրաստ բազում էր Նորա ի սեփելա և ի միւսովր, արդիւնարարք, այգէգործք ի լերինս կարմեղոս, զի այր արդիւնարարասէր էր։ և եղեն զօրք ոզիա պատերազմողք, և Թիւ հանդիսի նոցա ի ձեռն յայելայ որ աշխարհահամար դպիր էր, և ի ձեռն ամեսիայ դատաւորի, և ի ձեռն անանիա երկրորդին արքայի։ և ամենայն

ջաց։ և ասէ ցներքինին, դարձո զձեռն քո և հան զիս ի պատերազմէս։ վասն զի վտանգեցայ։ Եւ պարտեցաւ պատերազմ յաւուր յայնմիկ։ և արքայն իսրայէլի կայր ի վերայ կառացն իւրոց մինչև ցերեկոյ ընդդէմ ասորեացն. և մեռաւ ի մտանել արեգականն։

Բ. Մնացորդաց, զլ. ԻԶ. (էջ տպ. 351—352)

... Եւ շինեաց ոզիաս զաշտարակն երուսաղէմի առ դրան ձորոյն և առ անկիւնսն, և զօրացոյց. և շինեաց աշտարակս յանապատին. և փորեաց ջրհորս բազումս, վասն զի անասուն բազում էր Նորա ի սեփեղա՝ և ի դաշտին. և այգեգործք ի լերինն, և ի կարմեղոս. քանզի սիրէր զերկրագործութիւն։ Եւ եղեն ոզիայ զօրք որք առնէին պատերազմ, և ելանէին ի մարտ գունդք. և Թիւն նոցա ի ձեռն յէհէլի դպրապետի, և մասեայ դատաւորի, և ի ձեռն անանիայի փոխանակի արքայի։ ամենայն գունդք ցե-

Թիւ զօրագլխաց տոհմացն զօրացն որ ելանէին ի գործ պատերազմի ԲՌ. և ՋՃ. և ընդ նոսա զօրք պատերազմողք ԳՃՌ. և ԷՃՌ. և հինգ հարիւր այր, որ ի գործ պատերազմի էր ի Թիկունս Թագաւորին ի վերայ Թշնամեաց, և պատրաստէր ոզիա արքա ամենայն զօրացն վահանս, և նիզակս, և պատեանս, և աղեղնակապարճս, և պարսատիկս և քարինս։ Եւ արար ոզիա յերուսաղէմ մեքենայս խորհրդովք իմաստութեամբ, զի լիցին ի վերայ անգեանցն բաղիստս և վէմս մեծամեծս։ Եւ լու եղև պատրաստութիւն այն մինչև ի հեռաստան, և բարձրացաւ սիրտ նորա և մեծամտեաց. դարձաւ յապականութիւն անօրինել առաջի տեառն. և եկն եմուտ նա ի տաճարն տեառն մատուցանել խունկս ի վերայ սեղանոյն խնկոց ...

զապետիցն զօրաց ի պատերազմին երկու հազար վեց հարիւր։ Եւ ընդ նոսա զօր պատերազմող, երեք հարիւր հազար, և եւթն հազար, և հինգ հարիւր. նոքա էին որք առնէին պատերազմ զօրութեամբ մեծաւ օգնական լինելով արքային՝ ի հակառակորդացն։ և պատրաստէր նոցա ոզիաս ամենայն զօրուն, վահանս և նիզակս և սաղաւարտս և զրահս և աղեղունս և պարսս ի քարինս։ Եւ արար յերուսաղէմ մենքենայս արուեստից ճարտարութեան լինել ի վերայ պարսպաց, և ի վերայ անկեանց, ձգել նետս և քարինս մեծամեծս։ Եւ լսելի եղև պատրաստութիւն նորա մինչև ի հեռաստան. վասն զի սքանչելի էր նա յօգնել մինչև զօրացաւ։ Եւ իբրև զօրացաւ՝ բարձրացաւ սիրտ նորա առ յապականել, և անիրաւեցաւ ի տէր աստուած իւր։ և եմուտ ի տաճարն տեառն ծխել խունկս ի վերայ սեղանոյ խնկոց....

Ի վերջոյ պարտականութիւն եմ համարում իմ անկեղծ շնորհակալութիւնս յայտնել Ս. Էջմիածնի Միաբան շնորհունակ դըպիր Գալուստ Տէր Մկրտչեանին, որ Եւրոպացի և Հայ բանասէրներին արդէն ծանօթ իւր սիրալիր պատրաստականութեամբ ամէն կերպ աջակցութիւն ցոյց տուեց ինձ Մայր Աթոռի գրչագիրներով զբաղուելուս միջոցին։ Չեմ կարողմոռանալ և ս. Էջմիածնի գրադարանի հմուտ մատենապետ արժանապատիւ Հ. Սահակ Ամատունուն, որ բազմիցս օգնեց ինձ՝ դիւրացնելով գրչագիրների արտագրութեան գործը։ Սոցա եռանդուն աջակցութեանն եմ պարտական թէ ընդարձակ ընդօրինակութեան և թէ մանաւանդ այն մանրակրկիտ համեմատութիւնների համար, որ կատարել ենք միասին՝ Մնացորդաց Նորագիւտ գրքերը տպագիր Աստուածաշնչի հետ բաղդատելիս։

12. Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ, աշխ. Ա. եպիս. Մխիթարեան . . — 20

13. Պատմութիւն Սամուէլ քհ. Անեցւոյ, հրատ. Ա. Տէր Մելքելեան . 1 20

14. Ջամբռ, Սիմէօն կաթուղիկոսի. 1 —

15. Սորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ Ա. հատ. աշխ. Յ. եպիս. Շահխաթունեան . . 2 —

Նոյնը Բ. հատոր. . 2 —

16. Տօմար և Տօնացոյց, աշխ. Գ. քհ. Աղանեան . . . — 50

17. Պարզ Քարոզներ, Ա. գիրք աշխ. Էմ. քհ. Նազարեան . . — 15

18. Նոյնը Բ. գիրք . . — 15

19. Ուսումնասիրութիւն Խորենացու, աշխ. Գ. Տ. Մկրտչեան . . — 35

20. Յաճախապատում, հրատ. Ա. Տ. Մելքելեան . . . 1 —

21. Գեղարքունի, աշխ. Մ. արքեպիսկ. Սմբատեան . . . 2 —

22. Համամ Արևելցի, հրատ. Կ. Կոստանեան . . . — 20

23. Յովհաննէս Իմաստասէր, հրատ. Կարապետ Վարդապետ . — 15

24. Երուս. Յովհ. եպիս. Թուղթն առ Աբաս . . . . — 15

ԳԻՆՆ Է 15 կ.

1043

1043

<< Ազգային գրադարան
NL0213693